Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

Coalition to stop violence against women

ՏԱՐԵԿԱՆ ԼՐԱԹԵՐԹ

2019

Սիրելի ընթերցող,

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան» (ԸԿՆԲԿ) 2010 թ.-ից համախմբման հարթակ է Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունների համար: Այս տասը տարիների ընթացքում մենք պայքարել ենք կանանց հանդեպ բռնության և խտրականության դեմ, առաջ մղել օրենսդրական և քաղաքականության փոփոխություններ, իրականացրել իրազեկման լայնածավալ արշավներ:

Կանանց հանդեպ բռնության բոլոր տեսակների հաղթահարումը հանդիսանում է պետության և կառավարության պարտավորությունը: Դեռևս խորը արմատներ և լայն տարածում ունեցող այս խնդրի հաղթահարումը այն նախապայմանն է, առանց որի հնարավոր չէ կառուցել արժանապատիվ և ժողովրդավար պետություն:

Մեր թիմը կոչ է անում շահագրգիռ բոլոր կողմերին միանալ կանանց հանդեպ բռնության դեմ պայքարին: «Նոր Հայաստանը», որին ձգում ենք, պետք է լինի այն տարածքը, որում յուրաքանչյուր կին վստահ է, որ իր՝ բռնությունից և խտրականությունից զերծ լինելու իրավունքները ճանաչված, պաշտպանված և իրացված են:

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

Երևան, 2020 թ.

Այս լրաթերթում կարող եք ծանոթանալ

- Տարվա մեկնարկը. «Գենդերային բռնությունը Հայաստանում. խնդիրներ և իրավական կարգավորումներ» թեմայով կոնֆերանս
- «Ընտանեկան բռնության կանխարգելումը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ» ազգային համաժողով
- Ընթացիկ աշխատանքներ. դատական գործերի մշտադիտարկում, հանրային միջոցառումներ, վերապատրաստումներ
- Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օր
- Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ. «Մեղավորը բռնարարն է»
- Համագործակցություն պետական կառույցների հետ և օրենսդրական մեխանիզմների արդյունավետության խթանում
- Միջազգային ադվոկացիա. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում
- Գենդերային բռնության դեմ պայքարողները՝ խտրականության և ճնշումների թիրախում

Տարվա մեկնարկը. «Գենդերային բռնությունը Հայաստանում. խնդիրներ և իրավական կարգավորումներ» թեմայով կոնֆերանս

[փետրվար]

«Գենդերային բռնությունը Հայաստանում. խնդիրներ և իրավական կարգավորումներ» թեմայով կոնֆերանսի նպատակն էր ներկայացնել և քննարկել «Լռեցված ձայներ. կնասպանությունը Հայաստանում» զեկույցը, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի» կողմից մշակված ընտանեկան բռնության տվյալների բազան և անդրադառնալ ընտանեկան բռնության կարգավորմանն ուղղված օրենսդրահիրավական դաշտի խնդիրներին:

«Լռեցված ձայներ. կնասպանությունը Հայաստանում»

Սա Հայաստանում կնասպանության խնդրին անդրադարձող թվով երկրորդ զեկույցն է[1], որ պատրաստվել է ԸԿՆԲԿ կողմից: Զեկույցն անդրադառնում է 2016-17 թթ. կնասպանության դեպքերին, մասնավորապես՝ գործերի դատավարությանը և արդարադատության մատչելիությանը, ինչպես նաև կնասպանության երևույթի համակարգային և խորն արմատացած պատճառներին:

Ընտանեկան բռնության տվյալների հավաքագրման միասնական հարթակ

Հարթակն ի սկզբանե ստեղծվել է Կոալիցիայի անդամ «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից և նպատակ ուներ փաստաթղթավորելու և արագ արձագանքելու ընտանեկան բռնության դեպքերին: Կոալիցիայի ջանքերով գործիքը լրամշակվել է և այժմ ծառայում է որպես միասնական համակարգ ձևավորելու հարթակ[2], որտեղ ԸԿՆԲԿ անդամ կազմակերպությունները մեկտեղելու և փաստաթղթավորելու են ընտանեկան բռնության դեպքերի տվյալները:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի հետ կապված խնդիրներ

Օրենքի ընդունումից ի վեր (2017 թ.) Կոալիցիայի անդամ կազմակերպությունները բազմիցս անդրադարձել են օրենքում առկա խնդիրներին և ընտանեկան բռնության խնդրի լիարժեք կարգավորման համար անհրաժեշտ օրենսդրական բացերին: Դրանց թվում են օրենքում «ընտանեկան բռնություն» եզրույթի փոխարեն «ընտանիքում բռնություն» եզրույթի կիրառումը, որով օրենքը շեղվում է տվյալ եզրույթի

[1] http://coalitionagainstviolence.org/hy/publication/femicide2018/
[2] https://rru.swv.am/

միջազգայնորեն ճանաչված ձևակերպումից, իբրև օրենքի կարգավորման առարկա «ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցման» սահմանումը, ինչպես նաև այն, որ ընտանեկան բռնությունը քրեականացված չէ, իսկ օրենքով սահմանված՝ բռնության դրսևորումների ցանկը լիարժեք կերպով չի ներառում կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային փաստաթղթերով սահմանված դրսևորումները: Կոալիցիան շարունակական աշխատանքներ է տարել օրենքի մեխանիզմների կատարելագործման և օրենսդրական բացերի շտկման ուղղությամբ՝ հանդես գալով օրենսդրահիրավական դաշտի լրամշակման առաջարկություններով և համագործակցելով համապատասխան պետական կառույցների հետ: Արդյունքում, 2019 թ.-ի նոյեմբերին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առաջարկած նախագծով[3] օրենքում մի շարք կարևոր փոփոխություններ արվեցին: Այսպես, օրենքի կարգավորման առարկայից դուրս բերվեց ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցման վերաբերյալ դրույթը: Օրենսդրական դաշտում սակայն շարունակ փոփոխությունների և լրամշակումների կարիք կա. առանցքային բացերից է մնում ընտանեկան բռնության քրեականացման խնդիրը: Տվյալ փոփոխությունների իրականացման համար կարևոր է Հայաստանի ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների լիարժեք իրականացումը և մասնավորապես՝ «Եվրոպայի խորհրդի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիայի) վավերացումը: Տվյալ փաստաթղթի վավերացումը դեռևս չի իրականացվել, իսկ փաստաթղթի, դրա բովանդակության և նպատակների վերաբերյալ այս տարվա ընթացքում ակտիվորեն ապատեղեկատվություն տարածեցին ծայրահեղական տրամադրված տարբեր խմբեր: Այս խնդրին ավելի մանրամասն դեռ կանդրադառնանք լրաթերթի վերջին հատվածում:

«Ընտանեկան բռնության կանխարգելումը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ» ազգային համաժողով

[մայիս]

Տարվա հաջորդ ծավալուն միջոցառումը նվիրված էր ընտանեկան բռնության դեմ պայքարի իրավական հայեցակարգի և ընտանեկան բռնության հիմնախնդրի ընդհանուր իրադրության քննարկմանը՝ «Ընտանեկան բռնության կանխարգելումը Հայաստանում» ազգային համաժողովի շրջանակներում:

Ազգային համաժողովը համախմբեց ոլորտի մասնագետներին, կառավարության ներկայացուցիչներին, պատգամավորներին, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների ներկայա-

[3] https://www.e-draft.am/projects/2008/about

ցուցիչներին: Հատկապես կարևոր էր միջոցառմանը ընտանեկան բռնության ենթարկված կանանց մասնակցությունը:

Ոլորտային խնդիրներին անդրադարձավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը, ԱԺ պատգամավորները, մարզպետարանների սոցիալական աջակցության տարածքային կենտրոնների ներկայացուցիչները, Եվրամիության պատվիրակության ղեկավարը:

Զեկուցողները նշեցին, որ Հայաստանում բռնության ենթարկված անձանց աջակցության և խնդիրների լուծման ուղղությամբ մեծածավալ աշխատանքի կարիք կա, և կարևորվեց բոլոր գործընկերների համագործակցությունն այս ոլորտում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը արձանագրեց, որ նախարարությունն ամենաշատը սոցիալական աջակցության դիմումներից հետո է ստանում ընտանեկան բռնության ահազանգեր, բայց «արդյունավետ պայքարի և կանխարգելման իրավիճակ այսօր դեռևս չկա»: Իսկ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի անդամ Գոհար Շահնազարյանը շեշտեց, որ նույնիսկ օրենքի առկայության դեպքում 2019 թ. արդեն կա սպանված 6 կին, (տարիքային շեմը՝ 24-88): Համաժողովի մասնակիցները խոսեցին ընտանեկան բռնության խնդրի տարաբնույթ դրսևորումների մասին՝ կանանց տարբեր խմբերի, անչափահասների, մեծահասակների շրջանում:

Համաժողովի ընթացքում ներկայացվեց նաև ԸԿՆԲԿ փորձագետների մշակած «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի լրամշակման համար անհրաժեշտ առաջարկությունների փաթեթը:

● ● ● Ընթացիկ աշխատանքներ. դատական գործերի մշտադիտարկում, հանրային իրազեկում, վերապատրաստումներ

Այս տարվա ընթացքում Կոալիցիայի ուշադրության կենտրոնում շարունակել են գտնվել Թագուհի Մանսուրյանի և Սիրանուշ Գալոյանի դատական գործերը, որոնք Կոալիցիան մշտադիտարկել է նաև դատարանում: Այս դատական գործերը դեռևս ընթացքի մեջ են:

Կոալիցիան նաև ակտիվորեն ներգրավված է եղել հանրային իրազեկման տարբեր միջոցառումներում՝ բարձրաձայնելով կանանց հանդեպ բռնության աղմկահարույց դեպքերի մասին, մասնակցելով հեռուստաթերներին և հանրային քննարկումներին, համապատասխան տեղեկատվություն տարածելով սոցիալական ցանցերում, մասնավորապես՝ ԸԿՆԲԿ պաշտոնական ֆեյսբուքյան էջի միջոցով:

Հունիսին Կոալիցիան հանդես եկավ հայտարարությամբ՝ անդրադառնալով մեդիադաշտում առկա գենդերային խտրականությանն ու բռնությանը: Հայտարարության առիթ հանդիսացավ «Արմենիա» հեռուստաալիքի «Անհասցե ծնվածները» հեռուստասերիալը, որտեղ տղամարդը փորձում էր մկրատով կտրել կնոջ քիթը:



Կոալիցիայի պահանջի[4] հիման վրա Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, ուսումնասիրելով հաղորդման շրջանակներում ակնհայտ բռնության տեսարանները, Ընկերության նկատմամբ օգոստոսին հարուցեց վարչական վարույթ, իսկ սեպտեմբերի 11-ին հրապարակվեց որոշումը՝ «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Ինչպես և նախորդ տարիներին, մեր գործունեության առանցքում է եղել վերապատրաստումների կազմակերպումը ու պետական կառույցների ներկայացուցիչների կարողությունների զարգացումը:

Իրականացրել ենք նաև վերապատրաստման մի շարք դասընթացներ՝ ուղղված կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության համակարգերի պետական աշխատակիցների, որոշում կայացնողների և նեղ մասնագետների կարողությունների զարգացմանը: Վերապատրաստումներն

[4] http://coalitionagainstviolence.org/hy/7111/

իրականացվել են ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների խթանում և պաշտպանություն» ծրագրի շրջանակներում:

Հունիսի 26-28-ը և հուլիսի 9-11-ը Կոալիցիան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցությամբ իրականացրեց ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցման ցերեկային կենտրոնների աշխատակիցների, նախարարության աշխատակազմի ներկայացուցիչների և 911՝ Արտակարգ իրավիճակների նախարարության թեժ գծի պատասխանատուների վերապատրաստում: Առաջին եռօրյա դասընթացին վերապատրաստվեց 40 մասնագետ: Երկրորդ փուլի վերապատրաստումն իրականացվեց 26 մասնակցի համար:

Հանդիպման ընթացքում ԸԿՆԲԿ փորձագետները մասնակիցներին ծանոթացրին գենդերային հավասարության, գենդերային խտրականության և գենդերային բռնության խնդիրների տարաբնույթ դրսևորումներին, ինչպես նաև ընտանեկան բռնության դրսևորումներին ՄԻԱՎ-ով ապրող և հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ, ներկայացրին սեռական բռնության գենդերային ասպեկտներն ու ընտանեկան բռնության փուլայնությունը: Թեմատիկ անդրադարձը վերաբերում էր աջակցման կենտրոնների գործունեության ընդհանուր նկարագրությանն ու պետական սոցիալական աջակցության քարտեզագրմանը:

Վերապատրաստումը կարևոր առիթ էր նաև ստեղծելու փոխօգնության, շփման և փորձի փոխանակման հարթակ պետական այս կառույցների աշխատակիցների և ոլորտային հասարակական կազմակերպությունների միջև:

Վերապատրաստման աշխատանքներ տարվեցին նաև առողջապահության և կրթության ոլորտների ներկայացուցիչների հետ: Նոյեմբերի 16-ին դասընթաց անցկացվեց ՀՀ առողջապահության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների 15 աշխատակիցների հետ: Դասընթացի շեշտադրումն էր ընտանեկան բռնությունը որպես հանրային առողջության հիմնախնդիր, ընտանեկան բռնության հիմնական առանձնահատկությունները և կանխարգելման մեխանիզմները առողջապահական և կրթական համակարգերի դիտանկյունից:

Վերապատրաստումների շրջանակներում Կոալիցիայի փորձագիտական թիմը նաև մշակեց հատուկ՝ ոլորտային մասնագետների օգտագործման համար նախատեսված Բառարան, որտեղ տրվում են մի շարք եզրույթների սահմանումներ, ներկայացվում են բռնություն վերապրած անձանց հետ աշխատանքներում վարվելակերպի հիմնական կանոնները:

Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օր

[հոկտեմբեր]

2010 թվականից ի վեր ամեն տարի «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան նշում է հոկտեմբերի 1-ը որպես «Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օր»:

Այս տարի հոկտեմբերի 1-ի միջոցառումները տեղի ունեցան Սպիտակում, Վանաձորում և Երևանում:

Հանրային իրազեկման ակցիաների մեկնարկը տրվեց Սպիտակում՝ կենտրոնական հրապարակում: Կոալիցիայի անդամ «Սպիտակի հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Աշխեն Բաբայանի խոսքերով իրազեկման ակցիաները Երևանից «դուրս բերելը» կարևոր և անհրաժեշտ է: Կազմակերպության 2017 թ.-ին իրականացրած հետազոտությունը՝ «Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման հետազոտական զեկույցը»,[5] ցույց է տալիս, որ կանանց շրջանում իրազեկվածությունը ընտանեկան բռնության հիմնախնդրի վերաբերյալ շատ ցածր է: «Ընտանեկանը բռնությունը ընկալում են զուտ իբրև ֆիզիկական բռնություն, իսկ պաշտպանության մեխանիզմների մասին տեղեկացվածությունը գրեթե բացակայում է», - նշում է Բաբայանը:

Սպիտակում մեկնարկած ակցիան շարունակվեց Վանաձորում, իսկ երեկոյան Երևանի Միսաք Մանուշյանի անվան հրապարակում տեղի ունեցավ մոմավառություն՝ ի հիշատակ ընտանեկան բռնության զոհերի: Նշենք, որ Կոալիցիան 2019 թ.-ի ընթացքում արձանագրել է կնասպանության 11 դեպք: Մոմավառության ընթացքում հրապարակում տեղադրված էին սպանված կանանց նկարները, նկարագրված էին սպանության հանգամանքները, անցորդներին բաժանվում էին թեժ գծերի և պաշտպանության այլ մեխանիզմների վերաբերյալ տեղեկություն պարունակող նյութեր:



[5] https://spitakhelsinki.org/wp-content/uploads/2018/11/unnamed-file-3.pdf

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ. «Մեղավորը բռնարարն է»

[նոյեմբեր]

Նոյեմբերի 25-ին «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան» Երևանի հանրային վայրերում իրականացրեց իր ամենամյա իրազեկման ակցիան, որն ազդարարում է միջազգային «Գենդերային բռնության դեմ ակտիվության 16-օրյակի» մեկնարկը: Այս տարի մեր կողմից իրականացված հանրային իրազեկման ակցիայի առանցքում էր սեռական բռնությունը: Ակցիայի միջոցով թիրախավորել ենք հանրային այն կարծիքը, թե սեռական բռնության ենթարկված անձինք են մեղավոր իրենց հանդեպ ոտընձգության մեջ: Ակցիայի միջոցով Կոալիցիայի թիմը «շրջեց» վեկտորը՝ զոհից դեպի բռնարարը՝ ընդգծելով, որ «մեղավորը բռնարարն է»:

> *«Ես եմ իմ դասընկերուհուն հրավիրել սուրճի և բռնաբարել, չնայած նրա «ոչ»-ին», «Ես եմ իմ ուսանողուհուն սպառնացել քննություն չնշանակել, եթե սեռական հարաբերություն չունենա ինձ հետ», «Ես եմ ծեծելով բռնաբարել իմ կնոջը՝ սպառնալով, որ կարթնացնեմ երեխաներին և դա կանեմ իրենց ներկայությամբ»: Այս պատմությունները փակցված էին տղամարդկանց հագուստներին, և կարծես ինքնախոստովանական ցուցմունքներ լինեին:*

Հանրային իրազեկման ակցիայի ժամանակ անցորդներին բաժանվում էին նաև բուկլետներ և տեղեկատվական նյութեր: Կոալիցիայի ներկայացուցիչ Աննա Նիկողոսյանի խոսքով. «Մարդիկ հաճախ չգիտեն, թե ինչ է իրենից ներկայացնում սեռական բռնությունը, և թյուր ըմբռնում կա այն մասին, որ եթե սեռական բռնությունը կատարվում է ընտանիքում, ապա դա բռնություն չէ, քանի որ կինը ամուսնու սեփականությունն է»:

Համագործակցություն պետական կառույցների հետ և օրենսդրական մեխանիզմների արդյունավետության խթանում

2019 թվականի ընթացքում Կոալիցիան համագործակցություն է հաստատել պետական պատկան մարմինների և հատկապես՝ ընտանեկան բռնության խնդրի կարգավորման շրջանակներում առանցքային դերակատարի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: Պետական կառույցների հետ համագործակցության շրջանակներում իրականացված միջոցառումները ուղղված են եղել ապահովելու ընտանեկան բռնության, գենդերային հիմքով բռնության և խտրականության ենթարկված կանանց պաշտպանության և աջակցության մեխանիզմների արդյունավետությունը, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարողությունների զարգացումը՝ շեշտադրելով ընտանեկան և գենդերային բռնության դեպքերի հետ աշխատանքներում զոհակենտրոն և բազմաոլորտային արձագանքի ապահովումը: Համագործակցության շրջանակներում օրենսդրական մեխանիզմների արդյունավետության խթանման նպատակով մեր անդամները մշակել են մի շարք կարևոր փաստաթղթեր, որոնց կանդրադառնանք ստորև:

Ընտանեկան բռնության սոցիալական աջակցման կենտրոնների կարիքների գնահատման հետազոտություն

Կոալիցիան ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների խթանում և պաշտպանություն» ծրագրի համատեղ իրականացման շրջանակներում 2019 թ.-ին իրականացրել է 6 ցերեկային կենտրոնների կարիքների գնահատում Երևանում, Վանաձորում, Գյումրիում և Կապանում:

Կարիքների գնահատման անհրաժեշտությունը պայմանավորված էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայացրած որոշմամբ՝ ՀՀ տարածքում գործող ցերեկային կենտրոնները դարձնել նաև ընտանեկան բռնության աջակցման կենտրոններ: Մայիս ամսին ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվեցին ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար նախատեսված ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները[6]:

Կոալիցիայի աշխատանքային թիմի պատրաստած վերջնական *«Ընտանեկան բռնության աջակցման ցերեկային կենտրոնների կարիքների գնահատում»* խորագրով փաստաթղթում տեղ գտան մի քանի կարևոր եզրահանգումներ: Առաջարկությունները մասնավորապես վերաբերում էին.

- Ընտանեկան բռնության մասին օրենքի և համապատասխան մեխանիզմների վերանայման անհրաժեշտությանը, առավել հստակ և մանրամասն ընթացակարգերի մշակմանը:

[6] http://www.mlsa.am/?p=21102

- Ոլորտի մասնագետների համար համապատասխան վերապատրաստումների և վերահսկման (սուպերվիզիայի) տրամադրման անհրաժեշտությանը:
- Աջակցման կենտրոնների գործունեության և մատուցվող ծառայությունների մասին հանրային լայնամասշտաբ իրազեկման անհրաժեշտությանը և այլն:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար մշտադիտարկման ուղեցույցի մշակում

Կոալիցիայի փորձագիտական խումբը նաև մշակեց մշտադիտարկման ուղեցույց (*«Ընտանեկան բռնության աջակցության կենտրոնների մշտադիտարկման ուղեցույց Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար»*), որն անդրադառնում է Նախարարության՝ Ընտանեկան բռնության մասին օրենքով սահմանված ծառայությունների մատուցմանը: Ուղեցույցի նպատակն է ծառայություն մատուցողներին ներկայացնել ընտանեկան բռնության կանխարգելման ոլորտում Հայաստանի կառավարության պարտավորությունները, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակի և զգայունության չափանիշները:

Ընտանեկան բռնության դեպքերի տեղեկատվական վիճակագրական համընդհանուր թվայնացված բազայի մշակման համար տեխնիկական առաջադրանք

Խոսքը Կոալիցիայի և այլ հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև համապատասխան պետական կառույցների՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից համատեղ օգտագործվող բազայի ստեղծման մասին է:

Կոալիցիայի մշակած այս կարևոր փաստաթղթի նպատակն է նկարագրել ընտանեկան բռնության ենթարկված, ընտանիքում բռնություն գործադրող անձանց և նրանց պաշտպանության ընթացքի վերաբերյալ տեղեկատվական տվյալների հավաքագրման միասնական թվայնացված համակարգի ստեղծման համատեքստը: Տեխնիկական առաջադրանքը ներկայացվել է Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի[7] դիտարկմանը:

Տեխնիկական առաջադրանքը համառոտ ներկայացնում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ՀՀ կառավարության 10.10.2019 ընդունած «***Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին»***[8] №1381-Ն որոշմամբ տեղեկատվությունը, որ անհրաժեշտ է սահմանվող հաշվառման կարգի թվայնացման համար:

[7] http://www.mlsa.am/?page_id=19914
[8] http://www.irtek.am/views/act.aspx?aid=151923

Փոխըմբռնման հուշագրի կնքում

2019 թ. հունիսի 7-ին Կոալիցիայի անդամ կազմակերպություն «Կանանց աջակցման կենտրոնի», «Հայաստան» համահայկական հիմնադրամի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև կնքվեց փոխըմբռնման հուշագիր, որն առանցքային կարևորություն ունի պետության կողմից ընտանեկան բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայությունների գործիքակազմի և ընթացակարգերի զարգացման տեսանկյունից: Ըստ համաձայնագրի՝ միասնական եռակողմ համագործակցության շրջանակներում տարվող աշխատանքները պետք է նպաստեն «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի կիրարկմանը, օրենքով նախատեսված աջակցության կենտրոնների ցանցի և մասնագետների կարողությունների զարգացմանը:

Նկարում՝ աջից ձախ. «Հայաստան» համահայկական հիմնարդամի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը, «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության տնօրեն Մարո Մաթոսյանը

Միջազգային ադվոկացիա. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում

[դեկտեմբեր]

2019 թ.-ը ամփոփվեց Հայաստանի կառավարության ստանձնած մարդու իրավունքների պաշտպանության միջազգային պարտավորությունների վերաբերյալ զեկույցների ներկայացմամբ, առկա խնդիրների շուրջ միջազգային ադվոկացիայի իրականացմամբ՝ ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկման մեխանիզմի շրջանակներում:

Կոալիցիայի անդամ կազմակերպությունները դիտարկմանն ընդառաջ ներկայացրին մի շարք կարևոր ուսումնասիրություններ տեղական և միջազգային գործընկերների հետ համատեղ ՄԱԿ-ի աշխատանքային խմբի ուսումնասիրության համար:

Մասնավորապես, «Կանանց ռեսուրսային կենտրոնը» և «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը» ներկայացրին Հայաստանում սեռական բռնության հիմնախնդրին,[9] սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքի իրացման հետ կապված խնդիրներին,[10] ընտանեկան բռնության օրենսդրահիրավական կարգավորման բացերին[11] վերաբերող զեկույցներ:

2019 թ. դեկտեմբերին անդամ կազմակերպությունների ներկայացուցիչները նաև մասնակցեցին Ժնևում ընթացող ՄԱԿ-ի համընդհանուր դիտարկման նախապատրաստական նստաշրջանին՝ հանդիպելով դիտարկման աշխատանքային խմբի անդամների հետ, ինչպես նաև ելույթներ ունեցան նստաշրջանի ընթացքում:

Հայաստանի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները՝ «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիան», Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը և Հայաստանի հելսինկյան կոմիտեն ԸԿՆԲԿ անդամ կազմակերպությունների՝ «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի, «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի, «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի հետ համատեղ նստաշրջանի ընթացքում հանդես եկան հայտարարությամբ[12]՝ անդրադառնալով Հայաստանում ընտանեկան բռնության քրեականացման կարևորությանը, Հայաստանում խտրականության դեմ օրենսդրահիրավական կարգավորումների ապահովմանը, այդ թվում՝ առանձին հակախտրականության օրենքի ընդունման անհրաժեշտությանը, Հայաստանի կողմից «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացմանը:

[9] http://www.saccarmenia.org/files/uploads/UNUPR.pdf
[10] https://womenofarmenia.org/wp-content/uploads/2019/07/UPR-Armenia-Report.pdf
[11] https://www.theadvocatesforhumanrights.org/uploads/armenia_3rd_cycle_upr_final_cover_page_and_report_3.pdf
[12] https://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_35_-_january_2020/4._non-discrimination_and_equality_coalition_ngo_ppt.pdf

Գենդերային բռնության դեմ պայքարողները՝ խտրականության և ճնշումների թիրախում

2019 թ. կարևոր ձեռքբերումների տարի լինելով հանդերձ նաև ճնշումներին դիմակայելու և դրանց ի հեճուկս՝ մեր պայքարը շարունակելու տարի էր:

Կին իրավապաշտպաններն ու ակտիվիստները, հատկապես նրանք, ովքեր աշխատում են գենդերային բռնության և խտրականության, սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների առաջխաղացման շուրջ, շարունակում են Հայաստանում մնալ տարբեր՝ ծայրահեղական տրամադրված խմբերի թիրախում:

> «Շատ անգամ, երբ կնոջ մասին ենք խոսում, մենք տեսնում ենք մի տեսակի կին՝ մայր, շատ անգամ քույր ու վերջ: Բայց ես ուզում եմ հիշեցնել, որ մենք նաև միայնակ մայրերն ենք, մենք նաև բանակում երեխա կորցրած մայրերն ենք, մենք նաև մայր դառնալ չուզեցողներն ենք, մենք նաև տարեցներն ենք, մենք նաև տրանս կանայք ենք, նաև լեսբի և բիսեքսուալ կանայք ենք, որ ուզում ենք, կամ չենք ուզում երեխա որդեգրել կամ ունենալ, մենք սահմանամերձ գյուղերում ապրող կանայք ենք, աղքատներն ենք, մենք եզդի կանայք ենք, հաշմանդամություն ունեցող կանայք ենք, և երբ օրենքներ են մշակվում, մենք պետք է ուշադիր լինենք, և դուք բոլորդ, որպեսզի միայն մեկ կերպարի կանայք չօգտվեն այդ օրենքներից: Այսինքն՝ այս բոլոր կանայք են, որ ձեր մտքում պիտի գան՝ ներառելով այս ամենը, որ ասացի, նաև միացնելով դրան ՄԻԱՎ-ով ապրող կանայք, սեքս աշխատող կանայք և շատ ուրիշներ»:

Ատելության խոսքի արշավ սկսվեց մեր անդամ կազմակերպության՝ «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի համահիմնադիր Լարա Ահարոնեանի դեմ մարտի 8-ին «Քաղաքացիական հասարակություն -Ազգային ժողով համագործակցության հարթակ՝ հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների» խորագրով միջոցառման ընթացքում նրա ելույթից հետո: Ելույթում տիկին Ահարոնեանը խոսեց աղքատ, հաշմանդամություն ունեցող, միայնակ մայր, լեսբի, տրանս և բիսեքսուալ կանանց իրավունքների մասին՝ ներկաների ուշադրությունը հրավիրելով այն հարցի վրա, որ կանայք բազմազան են, ինչի պատճառով նա հայտնվեց օնլայն հարձակումների և ատելության խոսքի թիրախում:

Իր դեմ զրպարտությունների տարածման հիմքով Լ. Ահարոնեանը նոյեմբերին դատական հայց է ներկայացրել «Լույս» տեղեկատվական վերլուծական կենտրոնի ղեկավար Հայկ Այվազյանի դեմ, որը իր ասուլիսներից մեկում վիրավորել էր տիկին Ահարոնեանին՝ ասելով, թե վերջինս մանկապղծությամբ է զբաղվում: Գործը այժմ քննվում է դատարանում:

Մայիսի 4-ին «Բուկինիստ» սրճարանում Կոալիցիայի մեկ այլ անդամ՝ «Սեռական բռնության ճգնաժամային

կենտրոն» ՀԿ-ն, որը Հայաստանում միակ իրավապաշտպան կազմակերպությունն է, որը մատուցում է մասնագիտացված ծառայություններ սեռական բռնության ենթարկված անձանց, կազմակերպել էր «Իմ մարմինը անձնական է» գրքի շնորհանդեսը: Միջոցառումը, սակայն, խափանվեց վայր ներխուժած մոտ 25 անձանց (մեծ մասը՝ տղամարդիկ) պատճառով: Այս կապակցությամբ կազմակերպության տարածած հայտարարությունում[13] նշվում է, որ միջոցառումը խափանողների շարքերում են եղել այնպիսի անձինք, որոնք տևական ժամանակ՝ 2013 թ.-ից սկսած, ապատեղեկատվություն, սպառնալիքներ և ատելության խոսք են տարածում կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունների, իրավապաշտպանների նկատմամբ: Միջոցառումից հետո սրճարանի մուտքի մոտ մի շարք տղամարդիկ մասնակիցների ուղղությամբ ձվեր են նետել: Տեղի ունեցածի կապակցությամբ կազմակերպությունը բողոք է ներկայացրել ոստիկանություն, սակայն առ այսօր ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել:

Ապատեղեկատվության մի մեծ ալիք էլ՝ զուգորդված գենդերային հարցերով զբաղվող կանանց հանդեպ ճնշումներով, կապված էր «Եվրոպայի խորհրդի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիայի) վավերացման հետ, որն այս տարի բուռն քննարկումների և շահարկումների առիթ է դարձել Հայաստանում: Կոնվենցիայի վավերացման դեմ այժմ «պայքարում են» այն անձինք և խմբերը, որոնք տարիներ շարունակ պայքարել են ընտանեկան բռնության մասին օրենք ընդունելու դեմ, կանանց և տղամարդկանց իրավահավասարության դեմ՝ տարածելով բազմաթիվ մանիպուլյացիոն տեղեկատվություն և նյութեր թե՛ ընտանեկան բռնության, թե՛ միջազգային կոնվենցիաների և օրենքների մասին: Կոնվենցիայի քննադատությանը միացել են Հայ առաքելական եկեղեցին, քաղաքական և հասարակական գործիչներ, իսկ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նույնիսկ ստեղծեց դրա դեմ ստորագրահավաք հայտնի change.org հարթակում: Change.org-ը, սակայն, ջնջեց ստորագրահավաքը, ինչից հետո ստեղծվեց հատուկ կայք: Ապատեղեկատվության ալիքին դիմառելու համար որոշ պետական կառույցներ տարածեցին Կոնվենցիայի բովանդակության վերաբերյալ տեղեկատվական նյութեր[14], կոնվենցիայի վավերացման կարևորության մասին խոսեցին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը[15] և Արդարադատության նախարարի տեղակալ Քրիստինե Գրիգոր-յանը[16]: Օգոստոսին սակայն Արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը հարցազրույցում հայտնեց[17], որ 2019 թ.-ին Խորհրդարանը չի քննարկի կոնվենցիայի վավերացման հարցը:

Այսպիսով՝ պետությունը դեռևս թերանում է կանանց հանդեպ բռնության վերաբերյալ իր իրավական պարտավորությունների լիարժեք կատարման գործում, իրավապաշտպանների համար անվտանգ և նպաստավոր միջավայրի ապահովման, իրավապաշտպանների իրավունքների պաշտպանության երաշխավորման իր պարտավորություններում, որոնք ստանձնել է մարդու իրավունքների մի շարք միջազգային պայմանագրերի վավերացմամբ: Շարունակելով մեր ադվոկացիոն աշխատանքները նշված խնդիրների շուրջ՝ հույս ունենք, որ 2020 թ.-ին պետությունը կնախաձեռնի դրանց լուծմանն ուղղված առավել հրատապ և արդյունավետ քայլեր:

[13] https://bit.ly/2xu9uxZ
[14] http://www.mlsa.am/?p=21702
[15] http://www.mlsa.am/?p=21661
[16] https://bit.ly/33akpZe
[17] https://www.azatutyun.am/a/30129815.html

Խոսենք թվերով

2019թ.-ի ընթացքում Կոալիցիայի անդամ կազմակերպությունները ստացել են ընտանեկան և սեռական բռնության թեժ-գծերին 4592 զանգ:

Հոկտեմբերի 1-ին միայն Հայաստանի Սպիտակ, Վանաձոր և Երևան քաղաքներում Կոալիցիայի անդամներն առնվազն 3000 անձանց շրջանում բարձրացրել են իրազեկվածություն՝ բաժանելով ընտանեկան և սեռական բռնության մասին ավելի քան 7000 տեղեկատվական նյութ: ՀՀ քննչական կոմիտեի վարույթում 2019 թվականի ընթացքում քննվել է ընտանիքում բռնության վերաբերյալ 635 քրեական գործ՝ նախորդ տարվա 519-ի դիմաց: Քրեական գործերի մեծ մասը վերաբերում է կնոջ նկատմամբ ամուսնու կողմից կիրառված բռնությանը, գրանցվել են նաև ընտանիքի այլ անդամների կողմից կատարված առերևույթ հանցագործության դրսևորումներ:

Նույն ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կողմից ստացված ընտանեկան բռնության ահազանգերով՝ ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները 796 ահազանգով կայացվել է նախազգուշացում, իսկ 260-ով՝ անհետաձգելի միջամտության որոշում:

Կոալիցիայի տվյալներով 2019 թվականի ընթացքում սպանվել է 11 կին:

Զանգ թեժ գծերին	Իրազեկում	Տեղեկատվական նյութ	Քրեական գործ	Նախազգուշացում	Միջամտություն
4592	3000	7000	635	796	260

Սպանվել է **11** կին

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի աջակիցներ

«Քվինա թիլ Քվինա» հիմնադրամ

Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ

Հաշվետվության հեղինակ՝ Անահիտ Սիմոնյան

Հաշվետվությունը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական աջակցությամբ

© «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա, 2020 թ.

www.coalitionagainstviolence.org